



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ  
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ (DIGEST)  
N4(5) 2009թ. փետրվարի 21- մարտի 20

18 ապրիլի, 2009թ.

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ..... 3

1.1 Օրենքներ ..... 3

1.2 ՀՀ կառավարության որոշումներ..... 3

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ ..... 5

2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ ..... 6

3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ..... 8

3.1 Կառուցվածք և գործառույթներ..... 8

3.2 Ծրագրեր և կատարողականություն ..... 8

3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների..... 11

3.4 Միջազգային համագործակցություն..... 11

3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում ..... 12

3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և “թեժ գծի” վերլուծություն..... 12

3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր..... 13

**1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ՝**

**1.1 Օրենքներ**

Փաստաթուղթ.	“Ակցիզային հարկի մասին” ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	26 փետրվարի, 2009թ., ՀՕ-51-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 12 (678), 01.03.09թ.
Ուժի մեջ է.	2 մարտի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Օրենքով կատարված փոփոխությամբ ՀՀ տարածք ներմուծվող՝ ԱՏԳ ԱԱ, 2203, 2204, 2205 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների համար նվազեցվել են ակցիզային հարկի այն դրույքաչափերը, որոնք սահմանվել էին “Ակցիզային հարկի մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ օրենքով (26.12.2008թ. ՀՕ-28-Ն): Փաստորեն այդ վերջին նշված օրենքով “բարձրացված” դրույքաչափերն էլ իրականում որոշակիորեն նվազեցվեցին:

**1.2 ՀՀ կառավարության որոշումներ**

Փաստաթուղթ.	“Առանց երկկողմանի հաշվարկային փաստաթղթերի կամ հաշվարկային փաստաթղթերում նշված պայմաններից էականորեն տարբերվող պայմաններով կատարված գործարքների վերաբերյալ հարկային մարմիններ տեղեկություններ ներկայացնելու կարգը և ձևերը հաստատելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	22 հունվարի, 2009 թ., 129-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 11 (677), 25.02.2009թ.
Ուժի մեջ է.	7 մարտի 2009թ.

**Համառոտ նկարագիր**

“Հարկերի մասին” ՀՀ օրենքի 28.4-րդ հոդվածին համապատասխան՝ ՀՀ տարածքում ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման գործարքների համար երկկողմանի հաշվարկային փաստաթուղթ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դուրս չգրելու դեպքում (այդ թվում՝ գնորդի պահանջով) ապրանքներ մատակարարող, ծառայություններ մատուցող, աշխատանքներ կատարող կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից, ինչպես նաև այդպիսի ապրանքներ, ծառայություններ և աշխատանքներ ձեռք բերած կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է տուգանք՝ այդ գործարքների լրիվ արժեքով հատուցման գումարի 20 տոկոսի չափով: Նշված տուգանքը չի կիրառվում, եթե ՀՀ կառավարության սահմանած կարգով և ձևով այդ գործարքների կատարմանը հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմիններին տեղեկություններ են ներկայացվել առանց երկկողմանի հաշվարկային փաստաթղթերի կատարված գործարքների վերաբերյալ, և որը հիմնավորվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմինների կողմից կատարված հսկիչ գնումների արդյունքում: Հարկային մարմին ներկայացվող տեղեկություններում ներառման են ենթակա նաև այն հաշվարկային փաստաթղթերի վերաբերյալ տեղեկությունները, որոնցում նշված գործարքները կատարվել են “Հարկերի մասին” ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված էական պայմաններից տարբերվող պայմաններով, որը սահմանված կարգով հիմնավորվելուց հետո հիմք է հանդիսանում նաև նույն հոդվածով սահմանված կարգով և չափերով պատասխանատվության չկիրառման համար:

Որոշմամբ կանոնակարգվում է.

ա) “Հարկերի մասին” ՀՀ օրենքի 28.4-րդ հոդվածին համապատասխան՝ ՀՀ տարածքում

\* Դիտարկվել և հիմք են ընդունվել.

- ՀՀ պաշտոնական տեղեկագրեր. թիվ 11(677), 25 փետրվարի 2009թ. -թիվ 15(681), 18 մարտի 2009թ.
- ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի ակտերի տեղեկագրեր, թիվ 8 (326), 23 փետրվարի 2009թ. -թիվ 12(330), 18 մարտի, 2009թ.

կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման գործարքների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով երկկողմանի հաշվարկային փաստաթուղթ դուրս չգրելու դեպքում ապրանքներ, ծառայություններ և աշխատանքներ ձեռք բերած կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից հարկային մարմին տեղեկություններ ներկայացնելու կարգը,

բ) ՀՀ տարածքում կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման գործարքների համար դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում “Հարկ երի մասին” ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված էական պայմաններից տարբերվող պայմաններով կատարված գործարքների վերաբերյալ ապրանքներ, ծառայություններ և աշխատանքներ ձեռք բերած կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից հարկային մարմիններ տեղեկություններ ներկայացնելու կարգը:

Որոշմամբ սահմանված է ներկայացվող տեղեկությունների, հարկային մարմնի կողմից տեղեկություն ներկայացնողին տրամադրվող տեղեկանքի ձևերը, տեղեկություններում ներառման ենթակա տվյալները և դրանց կից ներկայացվող փաստաթղթերը, հսկիչ գնում չիրականացնել ու, ինչպես նաև հսկիչ գնման արդյունքում տեղեկությունները հիմնավորված կամ չհիմնավորված համարվելու հիմքերը:

Փաստաթուղթ.	“Ֆիզիկական անձի իրականացրած գործարքների մասով ավելացված արժեքի հարկի հաշվարկները ներկայացնելու, գումարների վճարման կարգը և ժամկետները սահմանելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	2009 թվականի փետրվարի 19, 199-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 14 (680), 11.03.2009թ.
Ուժի մեջ է.	12 մարտի 2009թ.

#### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել են.

- այն դեպքերը, երբ օրենքին համապատասխան ապրանքի մատակարարում համարվող գործարքի նկատմամբ կիրառվում է նույն որոշմամբ հաստատված կարգը,
- ֆիզիկական անձի կողմից ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկի ձևը, հաշվարկը ներկայացնելու և ԱԱՀ-ի գումարը վճարելու ժամկետը (մինչև գործարքի իրականացման եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ),
- դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմին տեղեկություններ ներկայացնելու կարգը:

Փաստաթուղթ.	Առևտրի իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենաների միջև ցանցային կապուղիների միջոցով համակարգչային տեղեկատվական տվյալների շտեմարանի ներդրման և շահագործման կարգը հաստատելու մասին
Ամսաթիվը և համարը.	12 փետրվարի, 2009 թ., № 128-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 11 (677), 25.02.2009 թ.
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

#### Համառոտ նկարագիր

Որոշումը սահմանում է, որ առևտրի իրականացման վայրերի կազմակերպիչները պետք է ստեղծեն համակարգչային տեղեկատվական տվյալների շտեմարաններ, ինչպես նաև պետք է ապահովեն տեղեկատվական միասնական համակարգի անխափան աշխատանքը:

Փաստաթուղթ.	Առևտրի իրականացման վայրերի տեղեկատվական տվյալների շտեմարանին Հայաստանի Հանրապետության հարկային մարմնի հասանելիության կարգը հաստատելու մասին
Ամսաթիվը և համարը.	12 փետրվարի, 2009 թ., № 125-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 11 (677), 25.02.2009 թ.
Ուժի մեջ է.	01.03.2009թ.

### Համառոտ նկարագիր

Որոշումը սահմանում է, որ հարկային մարմինը տեղեկատվության տեղափոխման սարքի միջոցով պետք է ստանա ֆիսկալային տվյալներ՝ առևտրի իրականացման վայրերում տեղադրված ցանցային հսկիչ-դրամարկղային մեքենաներից կամ առևտրի իրականացման վայրերում ստեղծված՝ տեղեկատվական տվյալների շտեմարաններից:

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի N 549 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	29 հունվարի, 2009թ., 152 -Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 12 (678), 01.03.2009թ
Ուժի մեջ է.	02.03.2009թ.

### Համառոտ նկարագիր

ՀՀ կառավարության 14.04.2004թ. “Նվազագույն շահութահարկի հաշվարկման բազայի այլ նվազեցումներ սահմանելու մասին” N 549-Ն որոշման մեջ կատարված փոփոխությամբ ոռոգման և խմելու ջրի մատակարարման գործունեություն իրականացնող ընկերությունների համար (բացառությամբ “Երևան Ջուր” փակ բաժնետիրական ընկերության)՝ 1 տոկոս դրույքաչափի կիրառմամբ նվազագույն շահութահարկի չափը որոշելիս հասույթը նվազեցվում է դրա ամբողջ մեծության չափով:

Փաստաթուղթ.	ՀՀ վարչապետի 1998թ. նոյեմբերի 6-ի N 620 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
Ամսաթիվը և համարը.	4 մարտի, 2009թ., N167 -Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր №14(680), 11.03.2009թ.
Ուժի մեջ է.	12.03.2009թ.

### Համառոտ նկարագիր

ՀՀ վարչապետի 1998թ. նոյեմբերի 6-ի “Պետական կառավարման մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակ և դեկավարների տեղակալների թվաքանակ սահմանելու մասին” N 620 որոշման 61.2-րդ կետում կատարված փոփոխություններին համաձայն “հարկային տեսչություններ” բառերը փոխարինվել են “հարկային տեսչություններ և օպերատիվ հետախուզության վարչության տարածքային բաժիններ” բառերով: Դա արտահայտում է հարկային վարչարարության տակտիկական նոր քաղաքականություն՝ օպերատիվ-հետախուզության վարչության աշխատանքների տարածքային կազմակերպման իմաստով:

### 1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ.	2009 թվականից ավելացված արժեքի հարկի կիրառման որոշ հարցերի վերաբերյալ
Ամսաթիվը և համարը.	02 մարտի, 2009 թ., № 2
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 11 (329), 16.03.2009թ.
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Պաշտոնական պարզաբանմամբ հստակեցվել են մեծ թվով հարցեր, որոնք խմբավորված են հետևյալ մասերում՝

1. պարզաբանվել են օրենքի 3-րդ հոդվածի այն դրույթները, որոնք վերաբերում են ԱԱՀ -ի շեմը չկիրառելու դեպքերին: Մասնավորապես՝ պարզաբանվել է, թե որ պահի դրությամբ է որոշվում կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում մասնակցության չափը, անհատ ձեռնարկատիրոջ պարագայում հաշվի առնվում է, արդյոք, բաժնետոմս կամ բաժնեմաս ձեռք բերելու, փայամասնակից դառնալու պահին որպես անհատ ձեռնար կատեր հանդես գալու կամ անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ չունենալու հանգամանքները, մեկից ավելի թվով

- գործունեության տեսակներով զբաղվելու, կամ մեկից ավելի թվով լիցենզիաներ ունելու դեպքում, ինչպես է որոշվում պետական տուրքի սահմանաչափը գերազանցելու փաստը:
2. պարզաբանվել են օրենքի 6.1-րդ հոդվածի որոշ դրույթներ: Մասնավորապես ս՝ պարզաբանվել է, թե որ գործարքների նկատմամբ են կիրառելի հոդվածի դրույթները (կիրառելի են, արդյոք, դրանք այն գործարքների նկատմամբ, որոնց հետաձգման ժամկետը լրանում է 2009թ. հունվարի 9-ից հետո), կրում են, արդյոք, ԱԱՀ վճարելու պարտավորություն այն անձինք, որոնք հետաձգման ժամկետի ավարտման պահին չեն հանդիսանում ԱԱՀ վճարողներ:
  3. պարզաբանվել 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած այն հարկ վճարողների կողմից վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների մասով հաշվանցումների կատարման և նախկինում կատարված հաշվանցումների ճշգրտման կարգերը:  
Պարզաբանվել է, թե ինչ կարգով է որոշվում է ԱԱՀ-ի դեբետային մնացորդի այն մասը, որը ենթակա է արտադրության և շրջանառության ծախսերին վերագրման այն անձանց կողմից, որոնք դադարել են համարվել ԱԱՀ վճարող:

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության 2001 թվականի ապրիլի 16-ի N 02/456 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը.	փետրվարի 23, 2009թ., 187-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 11 (329), 16/03/2009թ
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

**Համառոտ նկարագիր**

Հրամանով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ պետական եկամուտների նախարարության 16.04.2001թ. N 02/456 հրամանով հաստատված “Եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին” հրահանգում, որը պայմանավորված է 01.01.2009թ. դրությամբ կատարված օրենսդրական փոփոխություններով:

Հրամանով պարզաբանվել են հաշվեգրված աշխատանքի վարձատրության ու դրան հավասարեցված վճարումներից (այդ թվում՝ արձակուրդային գումարներից), վճարված ապահովագրական նպաստներից (բացառությամբ՝ հղիության ու ծննդաբերության նպաստների), առանց երկկողմանի փաստաթղթով կամ ՀԴՄ-ի կտրոնով կամ կրճատ հաշիվ-ապրանքագրով ՀՀ տարածքում կատարված ձեռքբերումների մասով եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման հարցերը, ինչպես նաև 2008թ. հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած անհատ ձեռնարկատերերի համար 2008թ-ի համար եկամտահարկի վճարման հարցերը, 2009թ. ընթացքում ԱԱՀ վճարող չհամարվող, ԱԱՀ վճարող չհամարվողից ԱԱՀ վճարող դարձած անհատ ձեռնարկատերերի եկամտահարկի հաշվարկման հարցերը, անհատ ձեռնարկատերերի եկամտահարկի կանխավճարների և նվազագույն եկամտահարկի վճարման հարցերը և այլն:

Միաժամանակ, 2009թ. հաշվետու եռամսյակների համար հաստատվել է կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, նոտարների կողմից ֆիզիկական անձանց վճարված (հաշվարկված) եկամուտների, պահված եկամտահարկի հաշվարկի նոր ձև, որում նախատեսված է մինչև 01.01.2009թ. հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող՝ 01.01.2009թ.-ից հետո փաստացի վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների համար առանձին վանդակներ (ըստ տվյալ եռամսյակի ամիսների), ինչպես նաև հաշվի է առնվել 01.01.2009թ.-ից անձնական նվազեցման նոր չափը:

**2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ**

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի N 1533-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	12 փետրվարի, 2009 թ., 122-Ն

Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 11 (677), 25/02/2009թ.
Ուժի մեջ է.	26 փետրվարի 2009թ.

**Համառոտ նկարագիր**

ՀՀ կառավարության 13.12.07թ. N1533-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 30.12.1998թ. N864 որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույքաչափերի “Ջրօգտագործման համար վճարի դրույքաչափերը” բաժնի 1-ին և 3-րդ կետերում “Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի և Երևանի քաղաքապետարանի կողմից 50 տոկոս և ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր տնօրինող ջրամատակարարման և ջրահեռացման գործունեություն իրականացնող ընկերությունների” բառերը փոխարինվել են “խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների” բառերով: Փոփոխության արդյունքում 26.01.2009թ. -ից մակերևութային ջրերի և խմելու համար պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի համար սահմանված դրույքաչափերի (0.5 և 1.0 դրամ) բացառությունները (0.025 և 0.05 դրամ) գործելու էին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող բոլոր կազմակերպությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների համար:

ՀՀ կառավարության 12.02.2009թ N122-Ն որոշմամբ սահմանվեց, որ փոփոխված դրույթների գործողությունը տարածվում է նաև մինչև ՀՀ կառավարության 13.12.07թ. N1533-Ն որոշման ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա:

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի N 864 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	22 հունվարի, 2009 թ., 123-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 11 (677), 25.02.2009թ.
Ուժի մեջ է.	01 ապրիլի 2009թ.

**Համառոտ նկարագիր**

“Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին” ՀՀ օրենքի 11.2 -րդ հոդվածին համապատասխան, բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողներն արդյունահանված պաշարների (արտադրված ածխաթթու գազի ծավալների) հաշվառման նպատակով ՀՀ կառավարության սահմանած կարգով (ՀՀ կառավարության 22.01.09թ. N97 -Ն որոշում) տեղադրում և շահագործում են հաշվիչ (չափիչ) սարքեր:

Որոշմամբ սահմանվել են ստորերկրյա քաղցրահամ և հանքային ջրի ու ածխաթթու գազի համար բնօգտագործման վճարի հաշվարկման կարգը: Միաժամանակ, սահմանվել է ստորերկրյա քաղցրահամ և հանքային ջրերի ու ածխաթթու գազի համար բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող փաստացի ծավալների՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով հաշվառում չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով հաշվառումը վարելու ժամանակահատվածի համար բնօգտագործման վճարները հաշվարկելու հիմքերը:

Որոշմամբ սահմանվել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննություն անցած և հաստատված հանքարդյունահանման աշխատանքների կատարման նախագծով լցանյութերի և բալաստային հումքի ելք նախատեսված չլինելու դեպքում շինաքարի կամ երեսապատման քարի օգտակար ելքի չափին համապատասխան հաստատված հաստատագրված դրույքաչափը կիրառվում է պինդ օգտակար հանածոների համար օրենքով սահմանված մարված պաշարների ամբողջ ծավալների նկատմամբ:

Փաստաթուղթ.	ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը 2007թ. դեկտեմբերի 13-ին Աստանայում ստորագրված ‘ ‘ Եվրոպա-Կովկաս-Ասիա միջանցքի զարգացմանն ուղղված միջազգային տրանսպորտի մասին” հիմնական բազմակողմ համաձայնագրի “Մաքսային ընթացակարգերի և փաստաթղթերի մշակման մասին” տեխնիկական հավելվածում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված
-------------	---

	պարտավորությունների՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով
Ամսաթիվը և համարը.	17 փետրվարի 2009թ.
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 11 (677), 25.02.2009թ.
Ուժի մեջ է.	Հրապարակման պահից

**Համառոտ նկարագիր**

2007 թվականի դեկտեմբերի 13-ին քաղաք Աստանայում ստորագրվել է “Եվրոպա-Կովկաս-Ասիա միջանցքի զարգացմանն ուղղված միջազգային տրասպորտի մասին” հիմնական բազմակողմ համաձայնագրի “մաքսային ընթացակարգերի և փաստաթղթերի մշակման մասին” տեխնիկական հավելվածում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունը, որով ՀՀ-ի համար նախատեսվում է հիմնական համաձայնագրի “մաքսային ընթացակարգերի և փաստաթղթերի մշակման մասին” տեխնիկական հավելվածի 2-րդ հոդվածի (Միջազգային կոնվենցիաներ) 1-ին կետում ամրագրված պարտավորությունների կատարում: Մասնավորապես կողմերին խորհուրդ է տրվում հնարավորինս կարճ ժամանակահատվածում միանալ 3 միջազգային համաձայնագրերին, օրինակ՝ Կիոտոյի կոնվենցիա “Մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման մասին 1973 թվականի միջազգային կոնվենցիա՝ լրամշակված 1993 թվականին”, 1975 թվականի “TIR մաքսային կոնվենցիա”, “Ապահով բեռնարկերի մասին” 1972 թվականի միջազգային (CSC) կոնվենցիա:

Արձանագրությամբ նախատեսվում է նաև, որ եթե տարանցման գործունեության համար կիրառվող ընթացակարգերն իրականացվում են համապատասխան պետության մաքսային օրենսդրության պահանջներին համաձայն, ապա միջազգային բեռնափոխադրման՝ ներառյալ տարանցիկ փոխադրման համար նախատեսված բեռները, որպես կանոն, փոխադրման ընթացքում չեն ենթարկվի մաքսային զննման, բացառությամբ համապատասխան պատասխանատու մաքսային վարչակազմի կանոնների և կանոնակարգումների համապատասխանությունն ապահովելու դեպքերի: Ելնելով նշվածից՝ մաքսային մարմինների կողմից կբացառվեն մաքսային կնիքների և անվտանգության այլ միջոցների կիրառումը մուտքի և ելքի կետերում:

Կողմերը փոխադրվող բեռների համար նշված մաքսային հայտարարագրերի միջոցով կմշակեն կանոններ բեռների պարզեցված անցկացումը կիրառելու համար:

Հարակից տեղեկատվություն. Այժմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում տարվում են համապատասխան աշխատանքներ Կիոտոյի Կոնվենցիային միանալու գործընթացը սկսելու ուղղությամբ:

**3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ**

**3.1 Կառուցվածք և գործառույթներ**

Համառոտագրի այս ժամանակահատվածում կառուցվածքային որևէ փոփոխություն չի եղել: Իրականացվել են քննարկումներ տարածքային հարկային և տեսչությունների նոր գործառույթների ու կառուցվածքի փաստաթղթի մշակման ուղղությամբ:

**3.2 Ծրագրեր և կատարողականություն**

**3.2.1 Ծրագրեր և կատարողականություն / հարկային ծառայության մասով/**

ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում տարեկան և այլ աշխատանքային ծրագրերից բխող մ իջոցառումների կատարման աշխատանքների իրականացումը, կազմակերպումը կանոնակարգելու նպատակով ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 18.03.09թ. հաստատվել է “ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում ընթացիկ աշխատանքային ծրագրերի կատարման ապահովման ընթացակարգի մասին ” N 549-Ա հրամանը: Վերջինս տարածվում է հրամանի ուժի մեջ մտնելու պահին չավարտված և հետագայում հաստատվող բոլոր ընթացիկ ծրագրերի վրա:

Հաստատված հրամանի համաձայն՝ ընթացիկ ծրագրերի միջոցառումների կատարման հիմնական պատասխանատուները աշխատանքների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը (հաշվետվությունները) ներկայացնում են եռամսյակային պարբերա կանությամբ (մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը), եթե ծրագրով նախատեսված միջոցառման տևողությունը ավել է քան 3 ամիսը և մեկ անգամ (մինչև ժամկետի ամսվան հաջորդող ամսվա 15-ը), եթե ծրագրով նախատեսված միջոցառման տևողությունը 1-3 ամիս է: Հրամանով նախատեսվել է նաև համապատասխան տեղեկատվությունը տեղադրել ՊԵԿ տեղեկատվական դարանում: Հաշվետվությունների այդպիսի տեղեկատվական դարանի տեքստով գործիք ՊԵԿ համակարգում գործարկվում է առաջին անգամ: ՀՀ ԿԱ



ՊԵԿ հարկային և մաքսային ռազմավարության և պլանավորման վարչության մասնագետների կողմից կազմակերպվել են համապատասխան ուսուցում-քննարկումներ հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագրից բխող և 2009թ. ընթացքում կատարման ենթակա միջոցառումները ՊԵԿ տեղեկատվական դարանում տեղադրման և լրացման ուղղությամբ:

Համառոտագրի այս ժամանակահատվածի ընթացքում իրականացվել են աշխատանքներ հետևյալ միջոցառումների կատարման ուղղությամբ.

1. Հարկ վճարողների հարկային օրենքների կիրառման մասին պարզաբանումների որամադրման նպատակով օրենսդրական փոփոխության նախագծի ՀՀ կառավարություն ներկայացնելը/ ծրագրի 43-րդ միջոցառում/

Հարկ վճարողների իրազեկվածության և օրենսդրության կիրառման միասնականության բարձր մակարդակի՝ հարկային և մաքսային օրենսդրության դրույթների մեկնաբանման մատչելի և պարզ ընթացակարգերի սահմանման նպատակով մշակվել և շահագրգիռ մարմինների կարծիքին է ներկայացվել “Հարկային և մաքսային օրենքների կիրառման մասին տեղեկատվության, պարզաբանումների և մեկնաբանությունների տրամադրման նոր մեխանիզմների սահմանման հայեցակարգը հաստատելու մասին” ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

Նախագծով մեկնաբանությունը սահմանվել է որպես հարկ վճարողների կողմից բարձրացված հարցի վերաբերյալ իրավունքի նորմի բովանդակության ներկայացում: Հստակ սահմանված են ինչպես մեկնաբանումների տեսակները, տրամադրման եղանակները, այնպես էլ մեկնաբանում տրամադրողների շրջանակները:

Նախագիծը ներկայացվել է շահագրգիռ մարմինների կարծիքին, հասարակական քննարկման, ՀՀ արդարադատության նախարարության փորձագիտական եզրակացության և տեղադրվել է հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:

2. Հարկային միջնորդների ինստիտուտի (խորհրդատվական ընկերություններ, բանկեր և այլն) վերաբերյալ հայեցակարգի ձևավորում: /ծրագրի 60-րդ միջոցառում/

Մշակվել և շահագրգիռ մարմինների կարծիքին է ներկայացվել “Հարկային միջնորդների ինստիտուտի ձևավորման մասին” ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

Հայեցակարգի մշակման համար հիմք են հանդիսացել ՀՀ ներկա իրավիճակի, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մասնագետների խմբի կողմից 2008թ. կատարված հարկային միջնորդների դերի ուսումնասիրությունները: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված հայեցակարգում ներառվել են ՀՀ հարկային համակարգում հարկային միջնորդների ինստիտուտի զարգացման ուղիները, սկզբունքները, ինչպես նաև պետական աջակցության շրջանակները:

Նախագիծը ներկայացվել է հասարակական խորհրդի կարծիքին: Ակտիվ քննարկումներ են իրականացվել հաշվապահական ծառայությունների կենտրոնում՝ Հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի, ինչպես նաև փաստաբանների միության ներկայացուցիչների մասնակցությամբ: Ներկայացվել են առաջարկություններ, ձևավորվել է ընդհանուր կարծիք նախագծի վերաբերյալ:

3. Հաշվետվությունները էլեկտրոնային տարբերակով հարկային մարմիններ ներկայացնելու համար օրենսդրական փոփոխությունների փաթեթի ներկայացում ՀՀ կառավարություն †

Հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու օրենսդրական հիմքերի ապահովման նպատակով՝ կատարված ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և շահագրգիռ մարմինների կարծիքին է ներկայացվել նախագծեր մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ: Ստացված առաջարկությունների լրամշակումից հետո

† ի նկատի են առնվում ՀՀ կառավարության 07.08.09թ. «ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագիրը հաստատելու մասին» թիվ 941-Ն որոշումից բխող միջոցառումները:

‡ Համապատասխան միջոցառում նախատեսված է ՀՀ կառավարության 15.01.09թ. «ՀՀ կառավարության 2009թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 40-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 242-րդ կետով

օրենսդրական փոփոխությունների փաթեթը սահմանված կարգով կներկայացվի ՀՀ կառավարություն:

4. Հարկային ծառայությունում ՏՏ ոլորտի զարգացման ռազմավարության երկարա ժամկետ Թրագրի մշակում

17.03.09թ հաստատվել է ՏՏ ոլորտի զարգացման ռազմավարության ծրագիրը ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի N 502-Ս հրամանով:

Ռազմավարության մշակման նպատակն է սահմանել հաջորդող տարիների (2009 -2011թթ.) ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնում ժամանակակից ՏՏ համակարգերի զարգացման հիմնական ուղղությունները և դրանց կիրառման ընդլայնումը, ապահովել հարկային մարմնում կիրառվող ՏՏ համակարգերի կապը այլ գերատեսչական մարմինների ՏՏ համակարգերի հետ: Ռազմավարությամբ սահմանվել է ՏՏ ոլորտի զարգացման գերակա նպատակը՝ այն է. ՀՀ-ում ներդրվող էլեկտրոնային կառավարման համակարգի շրջանակներում ստեղծել հարկային մարմնի ժամանակակից, միջազգային չափանիշների համապատասխանող ավտոմատացված հարկային տեղեկատվական վերլուծական համակարգ:

5. Հարկային ծառայության աշխատանքների գնահատման կատարողական ցուցանիշների համակարգի մշակում

Այս միջոցառման շրջանակներում նախատեսվում է մշակել աշխատանքների գնահատման կատարողական ցուցանիշների համակարգ, որի միջոցով հնարավոր կլինի գնահատել ինչպես հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների, այնպես էլ հարկային ծառայողների աշխատանքների արդյունավետության աստիճանը:

Կատարողականի վրա հիմնված ցուցանիշների մշակումը, որը հիմնված է լինելու աշխատանքների ինչպես որակական, այնպես էլ քանակական գնահատման սկզբունքների վրա, ներկայումս գտնվում է մշակման ընթացքում: Դրան զուգահեռ, հարկային մարմինը փորձնական եղանակով իրականացրել է կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների գնահատման միջոցառում, հաշվի առնելով պետական կառավարման մարմինների աշխատանքային ծրագրերի կազմման և կատարողականի գնահատման ուղեցույցի<sup>§</sup> հիմնական պահանջները:

6. Հարկ վճարողների սպասարկման ամբողջական ռազմավարության սահմանում

Մշակվել, քննարկվել, լրամշակվել և համապատասխան ստորաբաժանումներին ներկայացվել է կարծիքի 2009-2011թթ. հարկ վճարողների սպասարկման ռազմավարության ծրագիրը:

### 3.2.2 Ծրագրեր և կատարողականություն/ մաքսային ծառայության մասով/

ՀՀ մաքսային վարչարարության ռազմավարության 2008-2012թթ նախատեսված միջոցառումների կատարումն ապահովելու նպատակով 06.03.2009թ. հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի մաքսային մարմնի մասով 2009թ. ընթացքում կատարման ենթակա միջոցառումներն՝ ըստ կատարման պատասխանատուների և ժամկետների հաստատելու մասին N-278-Ս հրամանը: Բացի մաքսային վարչարարության ռազմավարության ծրագրից՝ հրամանում ներառվել են նաև մաքսային մարմնի մասով կատարման ենթակա միջոցառումներ ԵՀՔ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրից, ՀՀ կառավարության 30.10.2008թ. թիվ 1207-Ն որոշմամբ հաստատված Կառավարության կայուն զարգացման ծրագրից, ՀՀ կառավարության 15.01.2009թ. թիվ 40-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրից և ՀՀ կառավարության 24.07.2008թ. թիվ 878-Ն որոշմամբ հաստատված 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրից:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 06.03.2009թ. N 278-Ս հրամանով 2009 թվականի առաջին եռամսյակի համար նախատեսված բոլոր 13 միջոցառումները, որոնցից 6 ունեն շարունակական բնույթ, նախատեսվում է ավարտին հասցնել սահմանված ժամկետներում, մասնավորապես “Մաքսային հայտարարագրում փոփոխությունների և լրացումների վերաբերյալ ճշգրտումների փաստաթղթի ձևը հաստատելու մասին” ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանի նախագիծը գտնվում է մշակման փուլում, իսկ

<sup>§</sup> Ուղեցույցը (փորձնական է) մշակվել է ՀՀ կառավարության կողմից և նպատակ ունի կանոնակարգել պետական կառավարման մարմինների աշխատանքային ծրագրերի կազմման, աշխատանքային ծրագրի կատարման արդյունքներով կատարողականների գնահատման գործընթացի կազմակերպման հետ կապված հարաբերությունները

“Մաքսային միջնորդի կողմից մաքսային ձևակերպումների և մաքսային փոխադրողի կողմից մաքսային փոխադրումների վերաբերյալ վերադաս մաքսային մարմին հաշվետվության ներկայացման կարգը սահմանելու մասին”, “Մաքսային միջնորդի և մաքսային փոխադրողի մատուցած ծառայությունների դիմաց սահմանված սակագների վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության ապահովման կարգը սահմանելու մասին”, “Մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման քննությունների ծրագիրը և դրանց անցկացման կարգը սահմանելու մասին” և “Անմաքս առևտրի խանութների պահեստի և առևտրի սրահի ապրանքների շարժի հաշվառման և հսկողության կարգը սահմանելու մասին” ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանների նախագծերը գտնվում են ՀՀ արդարադատության նախարարությունում՝ գրանցման վերջնական փուլում:

### **3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների**

#### **3.3.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների/ հարկային ծառայության մասով/**

21.02.2009թ-ից մինչև 20.03.2009թ-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել է թվով 11 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 34 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 21.02.2009թ-ից մինչև 20.03.2009թ. ընթացքում քննարկվել է ընդամենը թվով 11 բողոք, որից.

- բավարարվել է 1 բողոք,
- բավարարվել է մասնակի 1 բողոք,
- մերժվել է 9 բողոք:

#### **3.3.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների /մաքսային ծառայության մասով/**

ՀՀ ԿԱ ՊԵԿ ներքին դիտարկումների և վերահսկողության վարչության մաքսային ծառայության մասով տեղեկատվություն հաշվետու ժամանակահատվածի համար առկա չէ :

### **3.4 Միջազգային համագործակցություն**

#### **3.4.1 Միջազգային համագործակցություն /հարկային ծառայության մասով/**

2009թ, փետրվարի 24-ին ՀՀ ԱԺ-ի կողմից վավերացվել է “ՀՀ և Չեխիային Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկը միջ խուսափելը կանխելու մասին” համաձայնագիրը: Ներկայումս, հայկական կողմն ակնկալում է ստանալ չեխական կողմի՝ համաձայնագիրը ուժի մեջ մտնելու համար ներպետական օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ ընթացակարգերը անցնելու մասին պաշտոնական ծա նուցումը, որից ելնելով կորոշվի համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

#### **3.4.2 Միջազգային համագործակցություն /մաքսային ծառայության մասով/**

Սույն թվականի մարտի 6-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Գ.Խաչատրյանը և Իտալիայի Հանրապետության փոխարտ գործնախարար Ալֆրեդո Մոնտալտոն ստորագրեցին “Հայաստանի Հանրապետության կառավարության և Իտալիայի Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին” համաձայնագիրը:

2009թ. մարտի 26-ին ՀՀ կառավարության հերթական նիստում հավանության է արժանացել “Հայաստանի Հանրապետության կառավարության և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին” և “Հայաստանի Հանրապետության կառավարության և Արգենտինայի Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին” համաձայնագրերի կնքումը:

Լրամշակման փուլում է գտնվում շահագրգիռ գերատեսչություններից ստացված “Հայաստանի Հանրապետության կառավարության և Բարայելի Պետության կառավարության միջև մաքսային հարցերում համագործակցության վերաբերյալ” համաձայնագրի նախագծի վերաբերյալ կարծիքների ամփոփումը, որի վերջնական տարբերակը կուղարկվի ՀՀ ԱԳՆ:

### 3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում

#### Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային և մաքսային ծառայությունների մասով/

2009թ. մարտի 20-ին հայտարարվել է մրցույթ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային ծառայության թափուր հաստիքները համալրելու նպատակով: Մրցույթի վերաբերյալ գետեղումը կատարվել է Ազգ օրաթերթում և ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքում ([www.taxservice.am](http://www.taxservice.am); [www.customs.am](http://www.customs.am)): Մրցույթը հայտարարվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության վերադաս մարմնի 15 և հարկային տեսչությունների 46 թափուր աշխատատեղերի համար, ինչպես նաև մաքսային ծառայության վերադաս մարմնի 20 և տարածաշրջանային մաքսատների 16 թափուր աշխատատեղերի համար: Մրցույթն անց է կացվելու 2009թ. ապրիլի 20-ին:

### 3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն

#### 3.6.1 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն / հարկային ծառայության մասով/

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության «Թեժ գիծ»-ը պաշտոնապես գործում է 2008թ. հոկտեմբերի 14 -ից: 2009թ. մարտ ամսին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԾ «Թեժ գծով» ստացվել է 316 բողոք և առաջարկություն, որոնք վերաբերել են «ՀԴՄ կիրառման մասին» ՀՀ օրենքի խախտման փաստերին: Բողոքների հիմնական մասն առնչվել է առևտրի կազմակերպման վայրերում ՀԴՄ նոր կտրոնների չտրամադրման կամ փոքր գումարով ՀԴՄ կտրոնի տրամադրման փաստերին: Հարցերի մի ստվար խումբ էլ վերաբերել է հարկային օրենսդրության մեջ կատարված վերջին փոփոխություններին և դրանց առնչվող մի շարք հարցերի: Չանգահարողների մեծ մասին հետաքրքրել են հաշվետվությունների հետ կապված հարցեր, որոնց պատասխանները ստանալու համար քաղաքացիներին տրամադրվել են համապատասխան բաժինների հեռախոսահամարները: Չանգահարողների մեծ մասի հարցումները հիմնականում վերաբերել են մարտի 6-ին կայացած վիճակահանությանը, խաղարկվող թվերին, շահած կտրոններին և դրանց հետ կապված բազմաթիվ այլ հարցերի:

#### 3.6.2 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն /մաքսային ծառայության մասով/

Փետրվարի 21-ից մինչև մարտի 20-ը «Թեժ գծով» ստացվել է 350- 400 զանգ: Չանգահարողների գերակշիռ մասը խնդրել է տրամադրել մաքսային մարմինների գործունեության և մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված տեղեկատվություն կամ խորհրդատվության կարիք է ունեցել: Նմանատիպ խնդրանքները բավարարվել են անմիջականորեն հեռախոսային խոսակցության ընթացքում:

Նշված ժամանակահատվածում արձանագրվել է 15 բողոք և 1 առաջարկություն, որը վերաբերել է հիբրիդ կամ այլընտրանքային վառելիքով աշխատող ավտոմեքենաների մաքսատուրքը նվազեցնելուն:

Բողոքների մեծ մասը հիմնականում վերաբերել է գործարքի գնի մեթոդով ապրանքի մաքսային արժեքի որոշմանը և ավտոմեքենաների գնահատման հետ կապված հարցերին: Որոշ բողոքներ էլ առնչվել են արտերկրից ուղարկված ծանրոցների մաքսազերծման հետ կապված խնդիրներին:

Կախված անհրաժեշտությունից՝ քաղաքացուն կամ զանգահարել և պարզաբանում են տվել խնդրի առնչությամբ, կամ էլ հրավիրել են ՊԵԿ մաքսային ծառայության համապատասխան ստորաբաժանում՝ հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու և տեղում անհրաժեշտ պարզաբանումներ տալու նպատակով:

Նշված ժամանակահատվածում «Թեժ գծով» օրական արձանագրվել է միջինը 15-20 զանգ:

Փետրվարի 21-ից մինչև մարտի 20-ն արձանագրված բոլոր բողոքներին արձագանքվել է:

### 3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր

#### 3.7.1 Հարկային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշ	2009 թվական		
		Փետրվար	Հունվար- Փետրվար	Աճի տեմպ %
		1	2	3
1	Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ (միավոր)	1651	2681	78.0
2	Հարկային մարմնի կողմից պետ բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն. դրամ), այդ թվում՝	27258.0	49207.8	81.3
2.1	ԱԱՀ	5290.0	10850.0	67.1
2.2	Շահութահարկ	4929.0	8841.1	78.6
2.3	Ակցիզային հարկ	372.0	657.0	32.1
2.4	Եկամտահարկ	4500.0	7590.1	115.8
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	7996.0	12781.6	89.5
2.6	այլ	4171.0	8488.0	82.9
3	Հարկային մարմնի կողմից կատարված հարկային ստուգումներ (հատ)	2066	3376	219.8
4	Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	1763.7	2656.4	49.6

#### 3.7.2 Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշ	2008թ.		2009թ.		Աճի տեմպը%	
		հունվար- փետրվար	փետրվար	հունվար- փետրվար	փետրվար	հունվար- փետրվար	փետրվար
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված մաքսային եկամուտներ (մլն դրամ)	35 395	18 224	31 003	13 152	87.6	72.2
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը(մլն դրամ), այդ թվում՝	211 183	108 783	158 313	79 508	75.0	73.1
	արտահանում (մլն դրամ)	43 917	25 347	25 953	14 573	59.1	57.5
	ներմուծում (մլն դրամ)	167 265	83 436	132 359	64 934	79.1	77.8
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների (միավոր)	6 765	3 981	5 913	3 438	87.4	86.4